

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱՊԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Կապանի մասնաճյուղը հայտարարում է 2019թ. հեռակա ուսուցմամբ բակալավրական կրթության ընդունելություն հետևյալ կրթական ծրագրերով.

Դասիչը	Կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները			Ընդունելության տեղերը, այդ թվում՝	ԲԶ	Ուսման վարձ, դրամ
		Մրցութային		Ոչ մրցութային			
	ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղ				63	4	
031101.01.6	Տնտեսագիտություն	Մ (գ)	Ֆ (գ)**	Հլգ (գ)*	15	1	360.000
061105.01.6	Տեղեկատվական տեխնոլոգիաներ	Մ (գ)	Ֆ (գ)**	Հլգ (գ)*	8		360.000
072401.01.6	Լեռնային գործ և օգտակար հանածոների արդյունահանում	Մ(գ) կամ Ֆ(գ) կամ Ք(գ)	Ֆ(գ)** կամ Ք(գ)** կամ Մ(գ)**	Հլգ (գ)*	14	1	312.000
071501.01.6	Մեքալուրգիա	Մ (գ) կամ Ֆ (գ)	Ֆ (գ)** կամ Մ(գ)**	Հլգ (գ)*	10	1	312.000
073201.01.6	Արդյունաբերական և քաղաքացիական շինարարություն	Մ (գ) կամ Ֆ (գ)	Ֆ (գ)** կամ Մ (գ)**	Հլգ (գ)*	6		312.000
072402.01.6	Օգտակար հանածոների հարստացում	Մ (գ) կամ Ֆ (գ))	Ֆ (գ)** կամ Մ (գ)**	Հլգ (գ)*	10	1	312.000

2. Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Կապանի մասնաճյուղը հեռակա ուսուցմամբ կարող են ընդունվել առնվազն միջնակարգ, նախնական մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթություն ունեցող անձինք՝ առանց տարիքի սահմանափակման:

3. Դիմորդը իր ընտրությամբ կարող է հայտագրել և մասնակցել միայն մեկ բուհի ընդունելության մրցույթին՝ հանձնելով սահմանված քննությունները: Ընդունելության մրցույթը կատարում է յուրաքանչյուր բուհ՝ ըստ

մասնագիտությունների, հատկացված տեղերի և միավորների: Դիմորդը կարող է դիմել մինչև երեք կրթական ծրագրի հայտագրմամբ՝ մրցույթի առաջին հայտի գերակայության սկզբունքով:

4. Սույն կետում նշված կարգավիճակ ունեցող դիմորդները բուհ ընդունվելու դեպքում օգտվում են օրենքներով սահմանված ուսման վարձի լրիվ փոխհատուցման իրավունքից,

- 1-ին ու 2-րդ խմբերի և մինչև 18 տարեկան մանկուց հաշմանդամները,
- առանց ծնողական խնամքի մնացած մինչև 23 տարեկան երեխաները:

5. Քննությունները դրական միավորներով հանձնած դիմորդներից, պետական բյուջեի միջոցների հաշվին, մրցույթից դուրս, ընդունվում են ՀՀ պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների երեխաները, ժամկետային զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս հաշմանդամ դարձած քաղաքացիները՝ համաձայն ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության և ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տված տեղեկանքների:

6. Պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված դիմորդները քննությունները դրական միավորներով հանձնելու դեպքում բուհ են ընդունվում մրցույթից դուրս, ըստ մասնագիտությունների նախարարության կողմից հաստատված տեղերի:

7. Դիմումի հետ ներկայացվում են՝

- միջնակարգ կրթության ատեստատը կամ միջին մասնագիտական կամ մասնագիտական տեխնիկական կրթության մասին փաստաթուղթը,
- 6 լուսանկար (3 x 4 սմ չափսի),
- անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր, զինվորական գրքույկ, ծննդյան վկայական, փախստականի վկայական, ՀՀ հատուկ անձնագիր, կացության վկայական),
- զինվորական գրքույկ կամ զինվորական կոմիսարիատից տեղեկանք ժամկետային զինվորական ծառայությունը անցնելու մասին,
- 4-րդ և 5-րդ կետերով սահմանված արտոնություններից օգտվող դիմորդները ներկայացնում են համապատասխան փաստաթղթեր (1-ին կամ 2-րդ խմբի և մինչև 18 տարեկան մանկուց հաշմանդամության, ինչպես նաև զինծառայող ծնողի զոհվելու մասին, առանց ծնողական խնամքի մնացած լինելու մասին),
- տեղեկանք տվյալ տարվա կենտրոնացված ընդունելության քննությունների գնահատականների վերաբերյալ,
- <<Գնահատման և թեստավորման կենտրոն>> ՊՈԱԿ-ի կողմից տրված միասնական քննությունների վկայագիր:

- Առկա ուսուցման համակարգում սովորող անձինք, հեռակա ուսուցման ընդունելության մրցույթին մասնակցելու համար կարող են ներկայացնել միջնակարգ կրթության ատեստատի կրկնօրինակը՝ այն բուհի նշագրումով և կնիքով, որտեղ գտնվում է բնօրինակը:

8. Ընդունելության քննությունների փաստաթղթերը հանձնելիս դիմորդը վճարում է 1500 դրամ՝ փաստաթղթերի ընդունման և ձևակերպման համար: Քննությունների կազմակերպման և անցկացման նպատակով յուրաքանչյուր քննության համար դիմորդը վճարում է 1500 դրամ: Ընդունելության քննությունների վճարից ազատվում են սույն կանոնների 4-րդ և 5-րդ կետերով սահմանված արտոնություններից օգտվող դիմորդները: Անկախ քննությանը մասնակցելուց և արդյունքից՝ քննության համար վճարված գումարը չի վերադարձվում: Դիմորդի քննությունների ժամանակացույցը կախված չէ փաստաթղթերը հանձնելու օրից:

9. Ընդունելության քննությունները գնահատվում են 20 միավորային համակարգով: Դրական են համարվում ութ և բարձր միավորները: Մինչև ութ միավորի դեպքում գնահատականը ամբողջացվում է (կլորացվում է, օրինակ՝ 7.5 միավորը հավասարվում է 8.0 միավորի) հօգուտ դիմորդի՝ ապահովելով դրական միավորի վաստակումը: Ութից բարձր միավորները գնահատվում են տասնորդական մասի պահպանումով՝ տվյալ առարկայի գնահատման չափանիշներով սահմանված քայլերին համապատասխան: Մրցույթին մասնակցում են այն դիմորդները, ովքեր տվյալ մասնագիտության համար նախատեսված քննություններից ստացել են դրական միավորներ:

Ս.թ. սեպտեմբերի 5-ից մինչև քննության օրը ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի դիմորդների համար պլանավորվում է կազմակերպել կոնսուլտացիաներ քննական առարկաների գծով:

Դիմորդների փաստաթղթերն ընդունվում են մինչև ս.թ **սեպտեմբերի 25-ը**, յուրաքանչյուր օր (բացի շաբաթ և կիրակի օրերից) ժամը 10:00-ից մինչև 17:00-ը:

ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի ընդունող հանձնաժողով՝ ք.Կապան,Բաղաբերդ Ձ, 3-րդ հարկ, 313 սենյակ, հեռ.՝(0285) 5-34-61, (093) 15 00 26: